ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ
ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION-DASHNAKTSUTYUN BUREAU

16 Ապրիլ, 2020 թ.

Արցախի Հանրապետութեան ընտրեալ նախագահ
Տիար Արայիկ Յարութիւնեանին
Ստեփանակերտ, Ա.Հ.

Մեծարգոյ Պրն. Յարութիւնեան,

Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի անունից շնորհաւորում եմ Ձեզ՝ Արցախի Հանրապետութեան նախագահ ընտրուելու կապակցութեամբ:

Արցախում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրութիւնները ևս մէկ անգամ ապացուցեցին Արցախի մեր ժողովրդի աննկուն կամքը՝ ազատ ապրելու և սեփական ճակատագիրը տնօրինելու իր անբեկանելի որոշման մասին:

Լիայոյս ենք, որ յառաջիկայ տարիները կը լինեն Արցախի համար տնտեսութեան զարգացման, ժողովրդավարութեան ամրապնդման, բանակի է՛լ աւելի հզօրացման և անվտանգութեան խորացման տարիներ:

Վստահեցնում ենք Ձեզ, որ Հ.Յ.Դաշնակցութեան համար Արցախը եղել է, կայ և շարունակում է մնալ գլխաւոր առաջնահերթութիւններից մէկը, որի անվտանգութեանն ի սպաս Դաշնակցութիւնը պատրաստ է, ինչպէս միշտ, ներդնել իր ողջ կարողականութիւնը:

Կրկին շնորհաւորում եմ Ձեզ՝ Ձեզ վստահուած յոյժ կարևոր պատասխանատուութեան կապակցութեամբ և մաղթում քաջառողջութիւն և բեղմնաւոր աշխատանք:

Յարգանքով՝

Յակոբ Տէր-Խաչատուրեան
Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ

Mher Mkrtchyan 12/1, Yerevan, Armenia, 010
Tel.: (37410) 52-18-90
E-mail:buro@arf.am Website: http://www.arfd.info

Մհեր Մկրտչյան 12/1, Երեւան, ՀՀ, 0010
Հեռ.: (37410) 52-18-90
Էլ-փոստ:buro@arf.am Կայք: http://www.arfd.am